




ՀԱՅԲԱՐԱԲԵՐԸ

ՄԲ ՁԱԳԱՄՍ

ԿՐԾԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԲԱԲԵՐԸ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀԻՈՎՄ



ԵՍ ԵՄ
ՔՅՐԱՆ
ՏՈՒՐԱՅ

1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցամսեայի բաժանորդագիւնն է մեկ մեծիս անոնց հանդր որ ի Կ. Պօլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաքնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դիկելու համար՝ Չորս (4) փրակ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պօլիս փոխադրուի, ծաւալն ու ձեռք, ինչպիսի նաեւ բաժանորդագրութեան սրայնանիս վերջնականացես պիտի ձգջուին: — Մեկ քիւր՝ մեկ դասեկիսն է:
2. Արձագանգը կը հրատարակուի Եաքաք օրերը:
3. Խնքագրութիւնս պարտաւորեալ չի անպատճառ կամ նոյնութեանք հրատարակելու իրեն դրկումս ո՛ր էր է յօրումս:
4. Ստորագրեալ յօրումսոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:
5. Նստակ էր յօրումսներ կը դրկուին ուղղակի խնքագրութեան:
6. Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
7. Ծանուցիսնց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆԻ

Առաջին Տարի	19 Օգոստոս 1911	Թիւ 9.
-------------	-----------------	--------

ԲՈՐԹՈՒԳԱՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԲՈՂՈՔԸ

(Շարունակութիւն)

« Սուրբ Աթոռայ գործ է վերջնական վճիռն արձակել :

Բայց կարելի չէ և ոչ վայրկեան մը ենթադրել կամ տարակուսիլ որ՝ այդ վճիռն չըլլայ կրկնութիւնն առաքելական « Ոչ կարեմք » ի :

Բաժանման այս օրէնքը այլ ևս պատրանք չվերցնէր . կերպական թըշնամութիւն է այն . վերահաս ոպառնական հաշածումն է այն : Բացայայտ կը պարունակէ այն՝ Բարդուղայի մէջ Կաթողիկէութիւնն ապանակելու գիտաւորութիւնը : Կարելի՞ է այս... Այո՛ : Եթէ Եկեղեցին, անշարժ վիմին վրայ հիմնուած, աշխարհիս մէջ անմահութեան (1) խոստումն առաւ, նոյնը չպատահիր ազգերու մասին : Ասանցմէ ոմանք տեսնուեցան որ ուրանալով և կորսնցնելով ճշմարիտ ու մաքուր հաւատքը, թշուառաբար կորսուեցան :

(1) — վաւերական մարդահամարի մը համաձայն, կաթողիկէից վերջին քսան տարուան մէջ յաւելումը եղած է շուրջ երեսուն միլիոն. (տ. Annuaire Pont. Cath. 1908. p. 444-451.) :

«Ուր՞ են, — կը հարցնէ Ֆէնըլօն, — հռչակաւոր Եկեղեցիքն Անտիոքայ, Երուսաղէմի, Կ.Պօլսոյ, որոնք ուրիշ անթիւներ ունէին իրենց հպատակ: Ինչ՞ մնացած է Ափրիկեան ծովափանց վրայ, ուր Եպիսկոպոսաց ժողովներն այնքան բազմախուռն էին որքան տիեզերական ժողովներ, և ուր Աստուծոյ օրէնքն կը մեկնուէր Օգոստինոսի չրթունքներէն: Այլ ևս չեմ տեսներ բայց եթէ երկիր մը որ դեռ կը ծխէ զինքն հարկանող շանթէն»:

(Քարոզ Յայտն.):

Նոյն բանը պիտի պատահի՞ արդեօք Բորթուգալի մէջ ալ: Պիտի ուզեն՞ Բորթուգալիք ուրոնալ իրենց փառաւոր անցեալը և իրենց թիկունքը դարձնել Եկեղեցւոյ՝ որոյ մայրական ծոցին մէջ աճեցաւ, ուռնացաւ, ազնուացաւ և զարգացաւ այս հիւննալի ազգը:

Պիտի ուզեն՞ արդեօք վանել վաարել զԱստուած խիղճերէն ու հայրենի յարկէն, ինչպէս արդէն վտարեցին Արդարութեան ատեաններէն ու դրպրոցներէն: Պիտի ուզեն՞ ապրիլ առանց Աստուծոյ՝ երջանկութեան օրերուն և տարարախտութեան ժամերուն մէջ: Պիտի ուզեն՞ զատուիլ Աստուծմէ կեանքի մէջ ու մահուան ատեն:...

Աւա՛ղ, այս պիտի լինէր իւր հազեմարքը: Կը յուսանք, կը վստահինք որ այլքան տհաւոր աղէտ մը պիտի չծանրանայ մեր սիրելի հայրենեաց վրայ: Պիտի ըլլան զուականեր, որք՝ անառակ և անմիտ, պիտի լքանին հօրենական տունը. բայց ի հեճուկս ամէն փոթորիկներու և ամէն տառապանքներու, այս ժողովրդեան մեծամասնութիւնը, ամենամեծ մեծամասնութիւնը, հալածանքի քուրային մէջ մաքրուելով, փարած պիտի մնայ խաչի, հաւատարիմ՝ Յիսուսի Քրիստոսի, հնազանդ՝ Սուրբ Եկեղեցւոյ:

Կաթողիկէ կրօնքը դադրեցաւ Տերութեան կրօնք ըլլալէ. ան պիտի չդադրի երբէք Բորթուգալի ժողովրդեան կրօնք ըլլալէ:

Բորթուգալի ժողովուրդը չկրնար բաժնուիլ կաթողիկէ միութեան կենդրոնէն. պիտի չբաժնուի Անկէ՝ որ է երկրի վրայ փոխանորդ Յիսուսի Քրիստոսի, Յաջորդ Ս. Պետրոսի, Գլուխն՝ որմէ կը հոսի և առանց որոյ չկայ կեանքն ընկերային այս գործարանասրտութեան որ կը կոչուի Եկեղեցի Աստուծոյ. «Ուր Պետրոս, անդ Եկեղեցի»:

Բորթուգալի ժողովուրդը պիտի լսէ ու յարգէ Ս. Աթոռոյ ձայնը:

Ս. Աթոռը, կը կրկնենք, չկրնար դեղեւիլ՝ չափելով նաեւ կոցութեան ծանրութիւնը:

Շահախնդրութեան այս աղէտալի ժամանակներուն մէջ, այն պիտի

տայ անգամ մը ևս ամենաազնիւ օրինակն՝ երկրաւոր օգուտն ու շահը սկզբունքներու սրբութեան զոհելու :

Երբ Հռոմ խօսի, մեր երկրին կաթողիկէ Կղերը պիտի գիտնայ ինչ ճամբայ բռնել . Հնազանդութիւն կամ Ուրացութիւն :

Բորթուգալի մէջ կաթողիկէութեան կեանքին համար ամենածանր վայրկեաններ անցունելու վրայ ենք :

Սատանան կ'աշխատի խարրաւելու : — Պիտի գտնուի՞ որո՞նք : — Հաւանակոն է . մարդկութեան պայմանն է . պատմութեան դասն է : Բայց կը յուսանք թէ որո՞նք շատ պիտի չըլլայ :


Արդէն ծանօթ դէպքերը կ'երաշխաւորեն մեզ վնասելու որ Բորթուգալի քահանայք ամուր պիտի կենան իրենց Եպիսկոպոսաց կողին , և Եպիսկոպոսք ու քահանայք , ինչպէս նաեւ պարզ հաւատացեալք , անքակ կերպով իրարու միացած՝ համաձայնութեան անձուկ կապերով , և հաւատքի և սրտի ու կամաց զգացումներով պնդագոյնս զօդուած , բարձրախօս վկայութիւն պիտի տան կատարեալ հպատակութեան և անդրդուելի հաւատարմութեան Գերագոյն Հովուապետին ձայնին՝ որ երկրիս վրայ կը փոխանորդէ Որդւոյն Աստուծոյ » :

*
**

Գերիմաստ Քահանայապետն Պիոս Ժ . Փոխանորդն Քրիստոսի , իւր մասնաւորապէս շնորհալի մէկ նամակով (15 Մարտ 1911) տուեալ առ Պատրիարքն և առ Արք . և Եպիսկոպոսունս Լուսիտանիայ (Բորթուգալի) , կը գովաբանէր այս նուիրապետութիւնը իրենց այս գրուածին համար , զոր կը կոչէր գործ իմաստուն և ժամանակաց և իրաց պարագայներուն պատշաճեալ : Քանզի անոնք ի Հոգւոյն Սրբոյ գրուած ըլլալով Եկեղեցին վարելու , ներկայ խռովութիւններէն ծագելիք չարիքն ու կրօնքին վնասները կը նշմարեն : Կրօնքի և Եկեղեցւոյ իրաւունքները՝ որ մարդկայիններէն զերազանց են , կուսակցութիւններու և իրաց փոփոխութեանց բնաւ չեն կրնար ենթադրուիլ . և կաթողիկէից համար ամենամեծ յանցանք է նորութիւններու սիրով հայրենաւանդ հաւատքի մէջ թերանալ . զի բաց ի Քրիստոսէ « Եւ ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ » (Գործ . Դ . 12.) : Գովելի է ուրեմն իրենց ընթացքը երբ պնդագոյնս կը խօսին կատարեալ հնազանդութեան վրայ զոր ամէն կաթողիկէ կը պարտի Մեծաւորաց , և զոր պէտք է մերժէ աշիրաւ օրէնքներու . ասոնք աւետարանական պատուիրաններ են , այնքան

մեծ՝ զի մարդոց կամքը չեն կրնար զանազն բնավիճակներէ կամ տկարացնել. այս է Եկեղեցւոյ ընդհանուր բարեկարգական օրէնքը: Նոյնպէս պէտք է որ հաւատացեալք սերտիւ միացած իրենց հովիւներուն հետ, դիմեն ահեղ զօրութեամբ հասարակաց թշնամւոյն՝ չարին դէմ: Ի հռոմէն Սրբազան Քահանայապետը կարի խոհական կը կոչէ այդ նամակը, չրջահայեաց, և Նուիրապետութեան կրօնասիրական և հայրենասիրական յիշատակարանը: Եւ կը յարէ. « Շարունակեցէ՛ք ուրեմն, կը յորդորենք զձեզ. ձեզ յանձնուած սրբազնասուրբ և ամենածանր պաշտօնը ամենայն արիւթեամբ կատարելու, և քա՛ւ լիցի թէ փոթորիկը պայթելուն վնասիք վեհերիք: Լաւ գիտէք թէ « Հաւատարիմ է Աստուած որ ոչ արկցէ զձեզ ի փորձութիւն առաւել քան զկար ձեր, այլ արասցէ ընդ փորձութեանն և զեւրն » (Ա. Կոր. Ժ. 13.): Բաց աստի կ'ուզենք նաև որ ձեր ամենուն հոգւոց մէջ խորապէս դրոշմուի սա ճշմարտութիւնը՝ զոր փորձով շատ լաւ գիտենք. այսինքն, թէպէտ թշնամի ոյժը որ Եւրոպիոյ մէջ դրեթէ ո՛չ ուրեք հանդարտ կը թողու զԵկեղեցին, ձեր քովն ալ ամէն կերպով դաժան և անգութ պիտի վարուի, սակայն թէ՛ Մեզ և թէ՛ ձեզ շատ ցաւեր և Բորթուզալցի ժողովրդեան շատ դժբախտութիւններ պիտի կարենան խափանուիլ, եթէ ամբողջ կաթողիկեայք կղերին սորվեցուցածներուն յօժարութեամբ ունկնդիր ըլլան. եթէ ամբողջ կղերականք՝ յաւենացն գործն բարիս առաւելեալ, մտադիր լսին ձեր հրամանաց. եթէ դուք ևս, վերջապէս, Պատուական Եղբարք, պահելով զսէրն որ առ միմիանս, Անո՛ր յարատե և հաստատօրէն յարած մնաք, որ Քրիստոսի Եկեղեցւոյն մէջ Սիւն հաստատութեան է: Հաստատամիտ եղէ՛ք ուրեմն և սիրոյ ու միաբանութեան կապերով զօդուած, արիարար գործեցէ՛ք: Քանզի ո՛վ որ յաղթութեան արդիւնքով պիտի ցընծայ, պէտք չէ զանգիտէ ու սարսափի ճակատամարտի վտանգէն: Եւ յիշուաւ « Այս է յաղթութիւն որ յաղթե աշխարհի, հաւաստն ձեր » :

(Շարունակելի)



Սիրայոծար կը հրատարակենք հետեւալ թրքերէն յօդուածը զոր ընդունեցանք Մեծ. Բաֆայէլ էֆ. Պ. Խըրրաքեանէ.

Լիպեռաշիզմ Թօխուժու

Պիր գաչ սէնէտէն վէ պէլքի տահա պիր չօգ զէմանտան պէրու էրմէնի Գաթօլիք միլլէթ միեանէսինտէ, տահա տօղրուսը Իսթանպօլ էրմէնի Գաթօլիք ճէօմաաթընըն պիր գըսմընտա պիր նիզամնամէ մէսէլէսի սիւրիւքլէնիպ կիտի վէրմէքտէ տիր, քի պու կիւնլէրտէ սաֆէհայլ շէտիտէսինի կէշիրտի: Թապիի Երեսփոխան մէճլիսինլին պազը ազալարը միւթէհէվիւր պիր հալտէ պուլունտըզլարընտան՝ հազիզէթի ահվալի թէմամէն կէօրիւպ իտրաք իտէմէյօրլար. եախօտ իտրաք իթմէք իսթէմէտիքլէրինտէն մէսէլէշի միհվէրի լաեըզընտան չըգարարազ Գաթօլիք ֆիլքըրինէ տահա զիյատէ մուզայիր պիր վատիյէ սէվզ իտիյօրլար: Թէէսիւֆ օլընաճազ ահվալ վուգուս կէլտի. sectaire լէրէ անճազ հազըշըր սէօլլէր սէօյլէնտի, ֆիլքըրլէր պէյան օլընտը: Կոնգակ մինասիպէթիլլէ Պատարազ էսնասընտա հարըլան նիւմայիշի նէյէ՞ իմնատ իտէլիմ. տինսիզլլիյէ՞մի, իսթիրասաթմմը, պիր ֆըրգա եա secte զայրէթինէ՞մի, հիտտէթէ՞մի. սօղրուսը պիլէմէյօրլմ: Երեսփոխան միւզաքէրաթը էմնասընտա Բաթրիք էֆէնտինին շախսը միւհթէրէմինէ գարշըր սէօյլէնէն հազարէթամիզ սէօլլէր, նէզաքէթ վէ թէրպիյէ խարիճինէ չըգըյօրտու: — Երեսփոխանըն թութտըղը մէսլէք շու ճիւմլէ իլէ պէյան օլընտը. « Միւսթագիլ միլլէթ իշինտէ միւսթագիլ Բաթրիքխանէ »: Մեճմուանըն 2 թէմուզ թարիխլի նիւսիսէսինտէ « Բաթրիք էֆէնտինին էֆալ ու հարաքիաթը մէշրութիյէթլէ իտարէ օլընան մէմլէքէթիմիզին գաւաիտի էսասիյէսինէ մուաֆըզ կէօրիւնմէյօր, » մէսլինտէ պէյանը միւթալէա իտիլիյօր: Հալպու քի Գիլիսանըն գանուշլարը հէր ան ու զէման միւթէպէտտիլ՝ հէր ան ու զէման միւթէլէվիլին տէյիլ տիր, պու գաւանիյն, գաւանիյնի մուգատտէսէ օլմասը իթիպարըլլա, հէր վազըթ գապիլը թաթպիլզ տիր, ծնլարա իթաաթ հէր վազըթ զարուրի տիր. Գիլէնին գանուշլարը հիւրրիէթը

հագիգիյէ իւզէրինէ միւստէս տիր, հիւրրիյէթ իսէ պաշտպօզուզլըզ, ին-
թիզամարզլըզ, ամիրինէ իսեան իթմէք օլմայըզ, պիր մագսէտը խայր
իչին էյի վասէթալար ինթիխապ իտէպիլմէք սէլահիյէթի տիր: Քիլիսէնին
էլլէրինտէն էմվալ ու էմլաքինի ալըզ իտարէ իթմէք՝ Քիլիսէնին էսարէ-
թինի ինթաճ, իսթիզլալընը զասպ իտէր: Իշթէ պէսան իտիլէն ֆիքիր-
լէրի, եարըլան նիւմայիշլէրի պիր արայա կէթիւրիւսէք, պիր շիպիւրալիզմ
թէշքիլաթը գարշըսընտա պուլընտըզմըզ գօլայճա թէզահիւր իտէր: Պու-
մէսէլէտէ թէշրիհի մահիյէթ, իսթիսըսճը նէթայիճ իտէրուէք, մէօհթէրէմ
մուարիզլէրիմիզ՝ « իսայր, պիզ պուշարը ասալ իսթէմէյօրըզ, տիւշիւն-
մէյօրըզ » տէեէճէքլէր. ֆագաթ պիր մէպտէ գասպուլ իտիլտիլինտէ, օլ
մէպտէնին միւսթէվի օլտըզը պիլճիւմլէ նէթիճէլէր տալսի զըմնէն գա-
պուլ օլընմըշ աստ օլընըր: Թէէսիւֆ օլընըր քի պու մէսէլէտէ միւսթագ-
պէլը միլլէթ տիւշիւնիւլմէյօր: ...

Հէր հաղնըշ աղնաշըլան հիւրրիյէթտէ տինէ գարշը թէտրիճէն նէֆ-
րէթ վէ խաւսուլմէթէ միւնճէրր օլան պիր նէվի «օղըզլըզ վար տըր-
հէր շիպիւրալիզմ տինէ գարշը պիր ֆէնա թօխումը հալի տիր, քի
սէրիան րէֆ իտիլմէզսէ, գըստա պիր միւտտէթ զարֆընտա՝ տէհշէթլի
վիւսաթլարա վարըր: Պու կիւնիւմիւզտէքի լիպէրալարըն հանկըսընա շու-
սէօզլէր թաթպիզ օլընմազ. « Բէտէր պատարագա կիտէրտի. օղլու ալի-
նը բուհանիեէյի իյֆատուն ֆէրաղէթ էթտի. թօրընըտա տինիզ օլտը »!...
միլլէթին աթիսինի տիւշիւնմէլի: ... Էրմէնի Գաթօլիք միլլէթի՝ Գաթօլիֆ
պիր նիզամնամէ իլէ իտարէ օլընըր: Գաթօլիք օլմագ շէրէֆի ալիսինէ նաիլ
օլմըշըզ. ճէնապը Հագգըն՝ ազիզ էվլատընը հալընըզ բուշարը տէյիլ, պիւ-
թիւն միլլէթլէրիտէ իտարէ իչին կէօնտէրտիլինի պիլիյօրըզ. պիւսէնա-
լէյի Գաթօլիք ճէօմաթլարընա խաւս նիզամնամէլէրին վազըը Քրիստոս
տըր, վէ վասըթայը պէյսնը՝ Ինճիլի շէրիֆ տիր. միլլէթին պաշընտա Քի-
լիսա օլմագ իյճապ իտէր, սէպէպլի. Քիլիսա Քրիստոսուն արուսէսի տիր.
հագիգէթ, աստալէթ, ինթիզամ վէ հուզուրըն միւսթէվտի տիր. պու մէր-
քէզը ճիհանըն թահթընտա հէր քրիսթիան միլլէթ վէ տէվլէթ ախըզ մէվ-
գի իտէր:

Հիւրրիյէթ հաղնըշ ֆիքիրլէրիլէ՝ պալատա զիքը օլընան շէրաթը
էստիյէ պիլէ ունուլթուլարաք, Քիլիսա՝ հէյէթը իճթիմալիեէտէն թարտ
իթմէք իսթէնիլիյօր. վէ պէօյլէճէ միլլէթլէր պաշտան վէ գալպտէն մահ-
րում օլարագ, իսթիլալճըլար էլինտէ պազիյէ օլուպ կիտիյօրլար:

Պազը Գաթօլիքլէր՝ պու սէվտայը հիւրրիյէթին թէէսիւրաթընտան

գաչամատըլար . նիգամնամէլէրինի՝ հաքիմէյէթի միւլլէյէ , Երեսփոխան հաքիմէյէթի իւզէրինէ վազ իթմէք իսթէեօրլար . պու նիգամնամէլէրի՝ Բաթրիքխանէնին Երեսփոխանա թէպաիյէթի էսասը իւզէրինէ իսթինատ իտիյօրլար . վէ պու Ֆիքրի միւտաֆաա իչին՝ « Զէմանըմըզ չիմտի պաշգատըր . էվվէլ իսթիպտատ իտի , գուրունը վիւսթա իտի . չիմտի 20 ճի ասըն շա՛շաանիտար մէտէնիյէթինէ գարշը իսեան իթմէք նէ՛ ավֆ օլընմազ ճինայէթ »! տէյօրլար : իշթէ պու հալը թէչէվվիւշիւ , պու հալը իսթիլաւլ , պու հալը մուխրիպի մէտէնիյէթ ատտ իտիյօրլար : . . .

Պու մէգալէի աճիպանէմտէ հիչ պիր քիմսէյի ըէնճիտէ իթմէք իսթէմէյօրլմ , ֆիքրիլէրի թէնգիտ իթտլիյիմ գոտար տա շախալարա գարշը օտէրէճէ հիւրմէթ վէ մէհապպէթ պէսլէյօրլմ . Երեսփոխան՝ Ալլահ , միւլլէթ վէ ինասը աթիյէ գարշըսընաա թութտըլը մէսլէքի մուխալիֆտէն ֆէրաղէթլէ , բարլազ պիր շէրէֆ գազանաճագ տըր . պիւաքս , էկէր « Միւսթապիլ Բաթրիպխանէ իչինտէ միւսթապիլ Երեսփոխան » էսասլարընը մէտհու սէնատան ֆէրաղէթ իթմէյէճէք օլուրլարաա , արթըզ շարգ միւլլէթլէրի տէ ռասիֆալիզմէ աօղըու ըէվան օլուճագլար . վէ գըսսա պիր միւտտէթ գարֆիլնտա սօսիսալիզմին զալիպիյէթի իւզէրինէ , հէյէթի իճթիմաիյէլէրի տէֆն իթմէք իչին չոն չալմագ վազթը կէլմիշ օլուր . վէ պէօյլէ միւտհիշ պիր լնդըրագ գարշըսընտա , իհֆատըմըզ պիզլէրէ լանէթլէր օգույաճագ . . .

Մեքրեպի հուգուզ միւսալիսիտիւնէն

Բաֆայէլ Պ . իըրլագեան



ՀԱՌԱՉԱՆՔ ԱՌ ՄԱՐԻԱՄ

Վերափոխման Տօնին Առթիւ

Թըռի՛ր, գընա՛, հառաչանք իմ, գընա՛ շուտով մինչ յերկին,
եւ վառ սրտիս խոր ծալքերէն տա՛ր հոն բոցեղ իղձ և սէր:
Սակայն ըզգո՛յշ, մի գուցէ ո՛հ, քեզ չար արծիւն գիշակեր
Թըռիչդ ազատ պարզած ատեն, զոհ ընէ իւր ճիրանին:

Գընա՛ առ նա, որ այնքան սիրտս այրէ բոցով սիրային,
Ու ըսէ՛. — Մայր, ո՛հ քաղցըր մայր, վայրիկ մօնուչ քու աչքեր
Դարձու՛ր հեռուն, հոն խեղճ որդիդ լըքուած վրհատ ու անտէր
Ահ՛ ո՛րքան, տե՛ս ո՛րքան քեզմէ հեծէ հեռու վըշտագին:—

Միտկ սիրոյ վարդն էր, միտկ ծիծաղն՝ սրգոյ հովտիս մէջ,
Մինչ նա ժըպտէր. ժըպտէր բնութիւն, ցընծար սերունդն Եւայի.
Վերացաւ արդ. մընաց աշխարհ լոկ փուշիրովն իւր անվերջ:

Գընա՛ առ նա հառաչանքդ իմ և դարձիր շուտ, բե՛ր ինձ լուր,
Երբ հաճութեան խըլեա ծիծաղ մ'իւր շըրթներէն շնորհալի,
Ծիծաղ խոստման՝ որ ըսէ ինձ. — Եկո՛ւր որդեակ. շուտ եկո՛ւր —:

Գրողընունի

ԹԵՄԵՐՈՒ ԶԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆՑ

Խարբերդու մեր Հասարակութենէն մէկը Յուլիս 12 թուականաւ
մեզ ուղղած է նամակ մը, որու բովանդակութիւնը հոս կ'ամփոփենք.

1. Երեսփոխան լուսաճններն անբացատրելի հակասութեամբ՝ այսօր
կը ջանան Ամեն. Թէրզեան Կ. — Պատրիարքի հակառակ ոտքի հանել ժո-
ղովուրդը, որ խանդավառ ակնկալութեանց մէջ է այսօր ալ իրենց արժա-
նաւոր Հովուի գործունէութենէն:

2. Այդ անձինք պայքար կը մղեն Կաթողիկոսի մը դէմ, որովհետեւ
սա իր պարտքը կատարելով կրօնքի Ս. սկզբունքներն կը պաշտպանէ չթող-

լով որ հայ կաթողիկէ Եկեղեցին ալ ուրիշ Եկեղեցեաց պէս անհիմն կազմակերպութեանց զոհէ իր հաստատութիւնը և սրբութիւնը:

3. Այդ խռովարարներու շարժումն փորձեց խարբերդի ժողովուրդն ալ ապստամբութեան գրգռել, բայց խիստ զարմանալի է թէ ինչպէս կըրցած են յուսալ որ խարբերդի ժողովրդեան մէջէն պիտի ունենային իրենց գործակից մը աւելի ուժգնօրէն մարտնչելու համար Ամեն. Թէրզեանի պաշտպանական սկզբունքներուն դէմ:

4. խարբերդցին լաւ գիտէ թէ այդ շարժումի սև փոթորիկն ո՞ր կուսակցութեան զաւադրութիւնն է. առանց հեռուն երթալու իր մէջէն ունեցաւ ապացոյցն իր համոզմանց ստուգութեան:

5. խարբերդ կարգացուեցաւ կանգակը և փառաւոր ընդունելութիւն գտաւ. սքանչելի էր նա և չքեղ բացատրութիւն մը Եկեղեցւոյ անփոփոխելի կազմակերպութեան և կաթողիկէ սկզբանց:

6. Սակայն հոս ալ սուրաց հեռագիր մը Տիգրանակերտի գաղնակցական կուսակցութենէ և հեռագիրն ուղղուած էր լոտին վարժարանի մէջ ուսուցանող Ղևոնդեան Պր. Մելքոնի, որ ներկայացուցիչ է 'ի խարբերդ նոյն կուսակցութեան: Սա կը թելադրէ քանի մը կրօնական սկզբունք անտեղեակ և անձնահաճ և իր հասարակութեան չպատկանող երիտասարդներ, որոնք կը յանդգնին վճիռ արձկելու և բողոքելու Ամեն. Թէրզեանի դէմ: Սակայն ստիպուեցան յետոյ խոստովանելու թէ գիտակցաբար չէին ըրած և պաշտօնին ձեռքէ չհանելու համար հարկ եղաւ որ յայտարարէին որ իրենք գաղնակցական կուսակցութեան չեն պատկանիր:

7. Ասոնց աննշան աղմուկը ինչպէս ծագեցաւ, այնպէս մարեցաւ և խարբերդի ժողովուրդը կրնայ այսօր հրատարակել որ ինքը ամբողջովին, անպայման կերպով յարած է իր սիրելի և պաշտելի Կ. — Պատրիարքի, Ամեն. Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեանի իմաստուն կարգադրութեանց:

Միգրտա, Յուլիս 12 ճ. s. 1911

Խարբերդցի

Հայ - Կաթողիկէ մը

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՎՄ

Սրբ. Քահանայապետին առողջութեան մասին այլընդայլոյ լուրեր տարածուեցան թերթերու մէջ: Թէև 15 օրէ ի վեր փոքր տկարութիւն մը անցուց, հիմա սակայն, փառք Աստուծոյ, Նորին Երանութեան վիճակը լաւ է. բժիշկները յոյս կուտան որ քանի մը օրէն կատարելապէս ապաքինի:

Այս օրերս ամէն թերթերն հրատարակեցին՝ Քալապրիոյ երկրաշարժէն աղետեալ վայրերուն Սրբ. Քահանայապետին կողմանէ ծախսուած ՈՒԹ միլիոն ֆր. ի հաշուեցուցակը: Այս զարհուրելի գծախտութիւնը կը պատահէր ի 28 Դեկտ. 1908: Նորին Երանութիւնն անմիջական օգնութիւններ հասցնելով հանդերձ, ամբողջ կաթողիկէ աշխարհի մարդասիրական ձեռնտութեան ջերմաջերմ գիմումներ քաւ. և գթութեան դրամն առատ առատ հոսեցաւ ի միսիթարութիւն սրտի հառարակաց Հօրն: Ահա այս գումարներուն գործածութեան վերջնական հաշուեկշիռն է որ այսօր կ'երևի ի լոյս աշխարհ, ինչպէս խառնակաւ կառավարութիւնը իր ժողոված միլիոններուն խղճամիտ հաշիւը պիտի չկարենայ երբեք տալ:

Երկրաշարժը ահագին չընդհանար մը յաւեր դարձուցած էր: Քհնյայ. Նուիրակ Գեր. Գօթթաֆովիի նախաձեռնութեամբ վերոյիշեալ գումարին գործածութեանը քաղուածոյքն այս է.

Շուրջ չորս միլիոն ծախսուած է շէնքերու համար. 85 եկեղեցիներ կամ շինուած կամ նորոգուած, 102 մեծաւ մատամբ նորոգուած. դպրոցներ, վարժարաններ, 47. ընդարձակ բնակատեղիներ, 156. վանքեր, 6. ևն:

Մնացած շուրջ չորս միլիոնը այլևայլ նպատակներու՝ ըլլան անմիջական, ըլլան հաստատուն, աղետեալ ամբողջ ժողովրդոյ:

Սրբազան Քահանայապետը կաթողիկէ աշխարհիս ամէն կողմէն առաքուած նպաստներէն ընդունած էր գրեթէ եօթն միլիոն, ինչպէս ի ժամանակին թերթեր հետզհետէ նշանակած էին, մինչդեռ ինքն ծախսեց ութ միլիոն, սկսած բարերար գործը աւարտելու համար: Քալապրիոյ մէջ իւր հայրական անունը օրհնութեամբ կը յիշուի և Պիոս Ժ. պատմական պիտի մնայ իբր իրենց անզուգական մեծ բարերարը:


ԹԵՐԹԵՐ

« Տաճար » կրօնական թերթը նոր բաժին մը կը բանայ (28րդ թիւէն) « Օտար Եկեղեցիներ » տիտղոսիւ . այս բաժինը այս անգամ երեք մաս ունի , առաջինը նուիրուած վերաքննութեան Անկլիքան Եկեղեցւոյն պաշտամունքին . երկրորդը գերմանական Աւետարանական եկեղեցւոյ կառուցման ի Հոռմ . այս երկուքն ալ գովասանքի բաժիններ են , գոնէ համակիր անտարբերութեան՝ երկու բողոքական աղանդներու առջև : Բայց երրորդ բաժինը նուիրուած է Հռոմէական Եկեղեցւոյ խճրճանաց : Հայ Էջմիածնական Եկեղեցին սիրալիր վերաբերումն ունի բողոքականաց հետ , կը միտի , մինչև իսկ կը ձգնի անոնց հետ միացում մը յառաջ բերելու , եկեղեցական կամ գաղութական , ինչպէս նաեւ այլ քրիստոնէական յարմարութեանց հետ . կը նեղուի իր միայնութիւնէն , կղզիացումէն . անսպաստոյնն առանձնութեան և լքման մղձաւանջով մը կը տառապի . սակայն և այնպէս կը մերժուի ամենէն՝ իբր հերժուածող . մինչև իսկ - բարէ - բողոքականներէն որ զլուստարչ . եկեղեցին կը գտնեն անկրօնութեան վտանգին մէջ : Եւ մինչդեռ ազատախաճ յանձնապատասխանութեան զստիթափէն մինչև բանապաշտութեան և աստուածամերժ ուրացութեան անդունդները թաւալելու սահող գնացող բողոքականութեան ետեւէն կը վազէ յուսահատ , իւր զգլխիչ գլորման մէջ՝ վերը երկնուղէջ ժայռին վրայ անաստան խառախած միշտ հին և միշտ նոր և որպէս արծուոյ նորոգեալ մանկութեամբ յաղթապանձ կանգնող Կաթողիկէ Եկեղեցւոյ թշնամական ափնարկներ և ստէպ անոր բարձրութեան անշուշտ հասնիլ չկրցող անարգանքներ կը նետէ : Հոս ալ նոյնը . « Տաճար » ը երկրորդ բաժնին մէջ կ'ըսէ թէ՝ « Այս գործին (եկեղեցւոյ շինութեան) նախածեռնութիւնն ունեցողներու նպատակն եղած է հաստատուիլ կենսունակութիւնը բողոքական Եկեղեցւոյն , որուն մահազանգն հնչեցնել կ'ուզէ Պապականութիւնը » : Ո՛հ , կենսունակութենէ զուրկ է բողոքականութիւնը , որ իբրեւ ուր մը անպտուղ , կտրուած է Քրիստոսի Ս . Եկեղեցիէն , չունենալով Սուրբ Խորհրդոց կենսունակ շնորհքը : Անոնց մահազանգը հնչեցուցած է Քրիստոս Տէր . « Եթէ Եկեղեցւոյն ալ չըսէ , Ըլլոյ քեզի իբրեւ հեթանոս ու մաքսաւոր » : Տաճարը պէտք է սորվի այդ ամէնը : Եթէ անոնց կ'ըսուի՝ « Անուն կենդանւոյ ունիս և մեռեալ ես » , իրեն պէտք է ըսուի . « Դու գաղջ ես , և ոչ ջերմ և ոչ ցուրտ . հանդերձեալ ես փախիլ ի բերանոյ իմմէ » : Եւ գիտնալու է ինքը որ Սրբազան Քահանայապետը անսխալ է ի հաւատոյս , ի բարեկարգականս և ի բա-

րոյս և պէտք է այնպէս ըլլայ, զի Քրիստոսի փոխանորդ է և Վարդապետ ընդհանուր Եկեղեցւոյ. ճշմարիտ է երբ իր պախարակած մատեններ կը յանձնարարէ անպայման վստահութիւն, խոնարհ ունկնդրութիւն և անթերի հպատակութիւն և մեր հոգիներուն գորովալիւր Հօրը » խօսքերուն. « Հռոմէին նայինք, այո՛, գործենք, դասենք և խօսինք Հռոմի նման » : Եւ այն յանդուգն բրօքէսօրին — և իրեն հետ Տաճարին — որ կը հարցնէ թէ՛ « Ո՛ւր կը մնայ ուրեմն Ս. Գիրքը, ի՞նչ կ'ըլլայ Աւետարանը », կը պատասխանենք. Ե՛կ բանա՛նք քեզի հետ Աւետարանը և համբուրենք և կարգանք. մտիկ ըրէ անսուտ ճշմարտութեան որ ըսաւ իւր Առաքելոյց. « Ով որ ձեզի կը լսէ, ինձի կը լսէ » . — « Գացէ՛ք, սորվեցուցէ՛ք » . — և Պետրոսի ըսաւ. « Դու ՎէՄ ես և այս վիմին վրայ պիտի շինեմ իՄ Եկեղեցիս » « Արածէ՛ իՄ սլխարնեհր » : Ոյր վստան և Պետրոս և անոր հետ միացած իր Առաքելակիցք համարձակութեամբ կը պատգամախօսէին. « Հաճոյ թուեցաւ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ և ՄԵԶ » (Գործ. Ժե. 28.) : Ահա ո՛ւր կը մնայ Ս. Աւետարանը :

Բայց դուք այնպիսիներէն էք՝ « Որ յամենայն ժամ ուտանին, և երբեք ի գիտութիւն ճշմարտութեան ո՛չ հասանեն » (Բ. Տիմ. Գ. 7.) :

Աւանդ :



Փ. Պիսկի

Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բորքուզայի Եպիսկոպոսոց Բողոքը	հջ	95
Լիպիւրայի թօխումու.	»	99
Հառաչանք առ Մարիամ — Վերադարձնալ Տոնին առթիւ	»	102
Թեմառու Զայնակցութիւն Կարողիկոսական Տրանսպրոքեանց	»	102
Տեղեկագրականք. — Հոռու.	»	104
Թերթեր	»	105

Այն ամէն պատշաճական անձանց որոնք հա-
ճեցան շնորհաւորութեան, քաջաշէրի եւ յարատե-
ւութեան թղթեր դրկել մեզ, առանձինն կը մատու-
ցանեմք մեր շնորհակալութիւնները, եւ մեր կող-
մանէ կը խնդրենք իրենց բարեացակամ աջակցու-
թիւնը: Կաթողիկէ Արժագանգն այնչափ աւելի պի-
տի զարգանայ եւ օր քան զօր օգտակարագոյն պիտի
հանդիսանայ Հասարակութեան. որչափ աւելի
հանդիպի նիւթական եւ բարոյական ձեռնհասու-
թեան եւ գրաւոր բաժնին եւս մասնակցութեան:

THE NEW YORK PUBLIC LIBRARY
ASTOR LENOX TILDEN FOUNDATION
155 E. 42ND STREET
NEW YORK 17, N. Y.

